



*United Nations
Millennium Declaration*

**ՄԱԿ-ի Հազարամյակի
ՀՌՉԱԿԱԳԻՐ**



United Nations
Միավորված ազգերի կազմակերպություն

*United Nations
Millennium Declaration*

ՄԱԿ-ի
ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ
ՀՌՉԱԿԱԳԻՐ

(8 սեպտեմբերի, 2000 թ.)



United Nations Office in Armenia
ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ
Երևան

**:վիճակագրումն ցոնցուզմզ
ցոնժաւնոտի ցոնժախտոտիզլզտ ցվնոմցո՝ վ-հՂՂ
Սցուժուցոցոցոցոց ցզվզլոց վննոտիո՜ս՝**

**իճակագրումն ցոնցուզմզ
ցոնժաւնոտի ցոնժախտոտիզլզտ ցվնոմցո՝ վ-հՂՂ**

ՆԱԽԱԲԱՆ

ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիրը ուղենիշ փաստաթուղթ է նոր դարի համար: Այն ընդունվել է 2000 թ. սեպտեմբերի 6-8-ը տեղի ունեցած Հազարամյակի գագաթաժողովում եւ բովանդակում է աշխարհի առաջնորդների աննախադեպ մեծ հավաքին մասնակցած 147 պետությունների ու կառավարությունների (ընդհանուր առմամբ՝ 191 ազգություն) ղեկավարների հուզող հարցերը:

Հռչակագիրը մշակվել է ամիսներ տեւած քննարկումներից հետո, հաշվի են առնվել տարածաշրջանային խումբները եւ Հազարամյակի համաժողովը, այսպիսով՝ հնարավորություն տալով լսելի դարձնել ժողովրդի ձայնը: Ես ուրախ եմ, որ Հազարամյակի իմ զեկույցում առաջ քաշած շատ պարտավորություններ ու նպատակներ արժարժված են Հռչակագրում:

Գագաթաժողով գումարելու իմ նպատակն էր Հազարամյակի խորհրդանշական ուժը ամենուր ծառայեցնել ժողովրդի առկա կարիքներին: Ունկնդրելով աշխարհի առաջնորդներին եւ ընթերցելով նրանց ընդունած Հռչակագիրը՝ ես ապշած եմ մեր առջեւ ծառացած մարտահրավերների վերաբերյալ նրանց տեսակետների զգալի ընդհանրությամբ ու գործողությունների ուղերձի հրատապությամբ:

Առաջնորդները հատկապես խնդիր են դրել կիսով չափ նվազեցնել ծայրահեղ աղքատության մեջ ապրող

մարդկանց թիվը, խմելու ջրով ու տարրական կրթությանը ապահովել բոլորին, կանխել ՄԻԱՎՉԻԱՀ-ի տարածումը, ինչպես նաև հասնել զարգացման այլ նպատակների: Նրանք կոչ են արել ավելի մեծ թափ հաղորդել ՄԱԿ-ի խաղաղության գործընթացին, որպեսզի խոցելի համայնքները կարողանան կարիքի դեպքում հույսը դնել մեզ վրա: Նրանք խնդրում են մեզ պայքարել անարդարության եւ անհավասարության, ահաբեկչության ու ոճրագործության դեմ, ինչպես նաև պահպանել մեր ընդհանուր ժառանգությունը՝ երկիր մոլորակը, ապագա սերունդների համար:

Հռչակագրում աշխարհի առաջնորդները նշել են Կազմակերպությունը նոր դարին համապատասխանեցնելու հստակ ուղիներ: Նրանց պարզապես մտահոգում է ՄԱԿ-ի արդյունավետությունը: Նրանք գործ են ակրնկալում, առավել եւս՝ արդյունք: Ինչ վերաբերում է ինձ, ես մեկ անգամ եւս հավաստում եմ իմ ու իմ անձնակազմի պատրաստակամությունը՝ իրականացնելու այս առաքելությունը: Բայց, վերջիվերջո, Միավորված ազգերի կազմակերպությունը հենց իրենք են՝ առաջնորդները: Այդ նրանց ձեռքին է, հետեւապես նրանք են պատասխանատու իրենց իսկ նախանշած նպատակները իրականացնելու համար: Ես դիմում եմ նրանց, նրանց ընտրողներին, աշխարհի մարդկանց. միայն դուք կարող եք վճռել, թե որքանով ՄԱԿ-ը ի գորու կլինի ընդունելու մարտահրավերը:

Գլխավոր ասամբլեան
Ընդունում է հետեւյալ հռչակագիրը.
ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիր

I. ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐ

1. Մենք՝ պետությունների ու կառավարությունների ղեկավարներս, 2000 թ. սեպտեմբերի 6-8-ը՝ նոր հազարամյակի արշալույսին, հավաքվել ենք ՄԱԿ-ի նյույորքյան կենտրոնական գրասենյակում՝ վերահաստատելու մեր հավատն առ կազմակերպությունն ու իր կանոնադրությունը՝ որպես առավել խաղաղ, բարգավաճ ու արդար աշխարհի կայուն հիմքեր:
2. Մենք ընդունում ենք, որ մեր սեփական հասարակությունների հանդեպ ունեցած պատասխանատվությունից բացի՝ մենք հավաքական պատասխանատվություն ունենք՝ գլոբալ մակարդակով բարձր պահելու մարդկային արժանապատվության, հավասարության ու անաչառության սկզբունքները: Ուրեմն, որպես առաջնորդներ, մենք սլարտավորություն ունենք աշխարհի բոլոր ժողովուրդների, հատկապես ամենախոցելիների եւ մասնավորապես աշխարհի ապագա տերերի՝ երեխաների առաջ:
3. Մենք վերահաստատում ենք մեր պարտավորությունը ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների ու սկզբունքների խնդրում, որոնք բոլոր ժամանակներում ապացուցել են իրենց հրատապությունն ու համընդհանրությունը: Իհարկե, դրանց սլատաշահությունն ու ներշնչելու գործությունն ավելացել է, քանի որ ազգերն ու ժողովուրդները դարձել են առավել փոխկապված ու փոխկախյալ:
4. Մենք նպատակամղված ենք ամբողջ աշխարհում ստեղծելու կանոնադրության նպատակերին ու սկզբունքներին

համահունչ արդար ու հարատետող խաղաղություն: Մենք մեկ անգամ եւս հավաստում ենք սատարել այն բոլոր ջանքերին, որոնք կոչված են բարձր պահել բոլոր երկրների ինքնիշխան հավասարությունը, հարգել նրանց տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը, խաղաղ ճանապարհով եւ արդարադատության սկզբունքներին ու միջազգային օրենքին ներդաշնակ լուծել վեճերը, չմիջամտել պետությունների ներքին գործերին, հարգել գաղութային լծի ու օտար նվաճման տակ գտնվող ժողովուրդների ազգային ինքնորոշման իրավունքը, մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները, ինչպես նաեւ բոլորի հավասար իրավունքները՝ անկախ ցեղի, սեռի, լեզվի կամ կրոնի տարբերություններից, եւ նպաստել միջազգային համագործակցությանը տնտեսական, սոցիալական, մշակութային ու մարդասիրական բնույթի միջազգային խնդիրներ լուծելիս:

5. Հավատում ենք, որ մեր առջեւ ծառայած հիմնական մարտահրավերն այսօր աշխարհի բոլոր ժողովուրդների համար գլոբալիզացիան դրական ուժ դարձնելն է: Քանի որ, չնայած գլոբալիզացիան մեծ հնարավորություններ է ընձեռում, ներկայումս դրա արդյունքներից օգտվում են քչերը, իսկ գինը վճարում են շատերը, եւ վնասները բաժին են հասնում շատ անհավասարաչափ: Ընդունում ենք, որ զարգացող երկրները եւ անցումային շրջանում գտնվող տնտեսություններն այս հիմնական մարտահրավերին դիմակայելիս առանձնակի դժվարությունների են հանդիպում: Այսպիսով, իր ամենայն բազմազանությամբ հանդերձ, համայն մարդկության վրա հիմնված ընդհանուր ապագա ստեղծելու լայնածավալ ու կայուն ջանքերով կարելի է միայն գլոբալիզացիան դարձնել համապարփակ եւ անաչառ: Այս ջանքերը պետք է գլոբալ մակարդակով քայլեր եւ միջոցներ ներառեն, որոնք կհամապատասխանեն զարգացող պետությունների ու անցումային տնտեսությունների կարիքներին եւ կձեւավորվեն ու կիրականան նրանց արդյունավետ մասնակցությամբ:

6. Մենք համարում ենք, որ քսաննեկերորդ դարում միջազգային հարաբերություններում մեծապես անհրաժեշտ կլինեն որոշակի մնայուն արժեքներ: Դրանք են.

- ◆ **Ազատություն.** տղամարդիկ եւ կանայք իրավունք ունեն իրենց կյանքն ապրելու եւ արժանապատվորեն մեծացնելու իրենց երեխաներին՝ զերծ սովից, բռնության, ճնշման ու անարդարության վախից: Ժողովրդի կամքի վրա հիմնված ժողովրդավարական եւ մասնակցային կառավարումն այս իրավունքների լավագույն երաշխիքն է:
- ◆ **Հավասարություն.** ոչ մի անհատ եւ ոչ մի ազգ չպետք է գրկվի զարգացումից օգտվելու հնարավորությունից: Տղամարդկանց ու կանանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները պետք է ապահովված լինեն:
- ◆ **Համերաշխություն.** գլոբալ խնդիրները պետք է լուծվեն այնպես, որ արժեքներն ու ծանրությունը, համահունչ անաչառության ու սոցիալական արդարության հիմնական սկզբունքներին, արդար բաշխվեն: Նրանք, ովքեր տուժում են կամ նվազագույնն են օգտվում, առավել օգտվողների կողմից արժանի են օգնության:
- ◆ **Հանդուրժողություն.** մարդ արարածներն՝ իրենց հավատամքի, մշակույթի ու լեզվի բազմազանությամբ հանդերձ, պետք է հարգեն միմյանց: Հասարակությունների ներսում եւ նրանց միջեւ գոյություն ունեցող տարբերությունները չպետք է ճնշել, ոչ էլ դրանցից վախենալ, այլ հարկ է փայփայել որպես մարդկության անզնահատելի արժանիք: Խաղաղության մշակույթն ու բոլոր քաղաքակրթությունների միջեւ երկխոսությունը պետք է ջանադրաբար խրախուսել:
- ◆ **Հարգանք բնության նկատմամբ.** խնայողաբար, կայուն զարգացման հրահանգներին համապատասխան պետք է օգտագործել բնական պաշարներն ու բոլոր կենսատեսակները: Միայն այս ձևով կարող են

մեզ տրված բնության ամսահմանափակ հարստությունները պահպանվել ու փոխանցվել մեր սերունդներին: Այսօրվա արտադրության ու սպառման անկայուն ձեւերը պետք է փոխվեն՝ ի շահ մեր եւ մեր սերունդների ապագա բարեկեցության:

◆ **Ընդհանուր պատասխանատվություն.** աշխարհասփյուռ տնտեսական ու սոցիալական զարգացման, ինչպես նաեւ միջազգային խաղաղության եւ անվտանգության սպառնալիքների վերահսկման պատասխանատվությունը պետք է բաշխվի աշխարհի ազգերի միջեւ ու գործադրվի բազմակողմանիորեն: Որպես աշխարհի ամենահամընդհանուր եւ ամենաներկայացուցչական կազմակերպություն՝ Միավորված ազգերի կազմակերպությունը պետք է կենտրոնական դեր խաղա այս հարցում:

7. Որպեսզի այս համընդհանուր արժեքները վերածվեն գործողությունների, մենք առանձնացրել ենք մի շարք հիմնական խնդիրներ, որոնց վերագրում ենք հատուկ նշանակություն:

II. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ,

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԻՆԱԹԱՓՈՒՄ

8. Մենք ջանքեր չենք խնայելու՝ մեր ժողովուրդներին ազատելու սլատերազմների արհավիրքից՝ ներքին թե արտաքին, որոնք վերջին տասնամյակի ընթացքում 5 միլիոն մարդկային կյանք խլեցին: Մենք հետամուտ ենք լինելու նաեւ զանգվածային ոչնչացման զենքերի առաջացրած վտանգները նվազեցնելուն:

9. Ուստի մենք վճռում ենք.

◆ Մեծացնել հարգանքը օրենքի իշխանության նկատմամբ ինչպես միջազգային, այնպես էլ ազգային հարաբերություններում, եւ մասնավորապես ապահովել անդամ պետությունների ըմբռնումը ՄԱԿ-ի կանո-

նադրությանը համահունչ, իրենց ներկայությամբ Արդարադատության միջազգային դատարանի կայացրած վճիռների խնդրում:

- ◆ Դարձնել ՄԱԿ-ն առավել արդյունավետ խաղաղության եւ անվտանգության պահպանման գործում՝ տրամադրելով նրան հակամարտությունների կանխմանը, վեճերի խաղաղ լուծմանը, խաղաղապահպանմանը, հետկոնֆլիկտային խաղաղության կառուցմանը եւ վերականգնմանը անհրաժեշտ միջոցներն ու գործիքները: Այս համատեքստում, նկատի ունենալով ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների հատուկ նիստի զեկույցը, խնդրում ենք Գլխավոր ասամբլեային անհասպաղ հաշվի առնել վերջինիս հանձնարարականները:
- ◆ Ուժեղացնել ՄԱԿ-ի եւ տարածաշրջանային կազմակերպությունների համագործակցությունը՝ կանոնադրության VIII գլխի դրույթներին համապատասխան:
- ◆ Ապահովել այն միջազգային վավերագրերի կիրառումն անդամ պետությունների կողմից, որոնք առընչվում են զենքերի վերահսկման եւ զինաթափման, միջազգային մարդասիրական եւ մարդու իրավունքների օրենքներին, ինչպես նաեւ կոչ անել բոլոր պետություններին՝ ստորագրել ու վավերացնել Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը:
- ◆ Ձեռնարկել միասնական գործողություններ միջազգային ահաբեկչության դեմ եւ հնարավորինս շուտ միանալ բոլոր համապատասխան միջազգային կոնվենցիաներին:
- ◆ Կրկնապատկել մեր ջանքերը՝ իրականացնելու աշխարհում բնրամոլությանը հակահարված տալու մեր ստանձնած պարտավորությունները:
- ◆ Չորացնել մեր ջանքերը՝ սլայքարելու միջազգային հանցագործության բոլոր տարատեսակների, այդ թվում անօրինական փոխադրումների, մարդկանց մաքսանենգության ու դրամի լվացման դեմ:

- ◆ Նվազեցնել ՄԱԿ-ի տնտեսական պատժամիջոցների հակազդեցությունը անմեղ բնակչության վրա, կանոնավոր վերանայման առարկա դարձնել այս պատժամիջոցների համակարգը՝ նվազեցնելով այդ պատժամիջոցների հակադիր ազդեցությունը երրորդ կողմի վրա:
- ◆ Չգտել զանգվածային ոչնչացման, հատկապես միջուկային զենքերի նվազեցմանը եւ այս նպատակին հասնելու համար կիրառել բոլոր միջոցները, ներառյալ միջազգային խորհրդածողով գումարելու հնարավորությունը միջուկային վտանգների վերացման ուղիները կանխորոշելու համար:
- ◆ Համատեղ գործողություններ իրականացնել՝ դադարեցնելու փոքր զինատեսակների եւ թեթև զենքերի անօրինական փոխադրումները՝ հատկապես առավել թափանցիկ դարձնելով զենքերի փոխադրումները եւ օժանդակելով տարածաշրջանային զինաթափման միջոցառումներին, հաշվի առնելով փոքր զինատեսակների ու թեթև զենքերի անօրինական առևտրին նվիրված առաջիկայում կայանալիք ՄԱԿ-ի խորհրդրդածողովի բոլոր հանձնարարականները:
- ◆ Կոչ անել պետություններին միանալ Հակահետեւակային ականների կիրառման, կուտակման, արտադրության ու տեղափոխման արգելման եւ դրանց ոչնչացման մասին կոնվենցիային, ինչպես նաեւ ականների լրափոխված արձանագրությանը՝ Պայմանական զենքերի մասին կոնվենցիային:

10. Մենք պնդում ենք, որ անդամ պետությունները պահպանեն օլիմպիական զինադադարը անհատապես եւ համատեղ, այժմ եւ հետագայում, ինչպես նաեւ աջակցեն Միջազգային օլիմպիական կոմիտեի ջանքերին՝ սույորտի ու օլիմպիական արժեքների միջոցով խրախուսելու խաղաղությունն ու մարդկային փոխընթերցումը:

III. ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ԱՂՋԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄ

11. Մենք ոչ մի ջանք չենք խնայի՝ ազատելու մեր տղամարդկանց, կանանց ու երեխաներին ծայրահեղ աղքատության խղճուկ ու անմարդկային պայմաններից, որոնց դատապարտված է ներկայում ավելի քան մեկ միլիարդ մարդ: Մենք լի ենք վճռականությամբ՝ իրական դարձնելու զարգացման իրավունքը բոլորի համար եւ կարիքից ազատագրելու համայն մարդկությանը:
12. Այդ իսկ պատճառով մենք որոշում ենք ստեղծել զարգացման եւ աղքատության վերացման նպաստավոր միջավայր՝ թե՛ գլոբալ եւ թե՛ ազգային մակարդակներով:
13. Այս նպատակներին հասնելու հաջողությունը, ի թիվս այլ գործոնների, կախված է յուրաքանչյուր երկրում պատշաճ կառավարումից: Այն կախված է նաեւ միջազգային մակարդակով պատշաճ կառավարումից եւ ֆինանսական, դրամական ու առետրական կառուցվածքի թափանցիկությունից: Մենք հավիված ենք բաց, լիիրավ, օրինապահ, կանխատեսելի եւ անկողմանակալ բազմակողմանի առետրական ու ֆինանսական կառուցվածքին:
14. Մեզ անհանգստացնում են այն խոչընդոտները, որոնք ծառանում են զարգացող երկրների առջեւ իրենց կայուն զարգացման ֆինանսավորմանն անհրաժեշտ պաշարների կենտրոնացման ժամանակ: Ահա թե ինչու մենք ոչ մի ջանք չենք խնայի զարգացման ֆինանսավորմանը նվիրված 2001 թ. նախատեսվող բարձր մակարդակի միջազգային ու միջկառավարական միջոցառման հաջող իրականացման համար:
15. Մենք նաեւ նախաձեռնում ենք անդրադառնալ թույլ զարգացած երկրների հատուկ կարիքներին: Այս համատեքստում մենք ողջունում ենք 2001 թ. մայիսին կայանալիք թույլ զարգացած երկրներին նվիրված ՄԱԿ-ի երրորդ կոնֆերանսը եւ կջանանք ապահովել դրա հաջողությունը: Մենք

կոչ ենք անում զարգացած երկրներին.

- ◆ որդեգրել հիմնական բոլոր արտահանումների մաքսատուրքից եւ չափաբաժնից զերծ թույլ զարգացած երկրների քաղաքականություն (ցանկալի է մինչ կոնֆերանսը),
- ◆ անհապաղ իրականացնել շատ պարտք ունեցող աղքատ երկրների պարտքերի մեղմացման առաջադրված ծրագիրը եւ համաձայնության գալ՝ չեղյալ հայտարարելու այդ երկրների բոլոր պաշտոնական երկկողմանի պարտքերը՝ ի պատասխան իրենց աղքատության նվազեցմանն ուղղված ակնհայտ պատրաստակամության եւ
- ◆ առավել աջակցել հատկապես այն երկրների զարգացմանը, որոնք իսկապես ջանում են իրենց ունեցած միջոցները գործադրել աղքատության նվազեցման համար:

16. Մենք նույնպես լի ենք վճռականությամբ՝ բազմակողմափորձեն ու արդյունավետ կարգավորելու ցածր եւ միջին եկամուտով զարգացող երկրների պարտքի խնդիրները գանազան ազգային եւ միջազգային միջոցներով, որոնք նպատակաուղղված են՝ երկարաժամկետ հաստատուն դարձնելու նրանց պարտքերը:

17. Մենք նույնպես վճռել ենք ընդառաջել փոքր կղզիների զարգացող երկրների հատուկ կարիքներին՝ արագորեն ու ամբողջությամբ կիրառելով Բարբադոսի գործողությունների ծրագիրը եւ Գլխավոր ասամբլեայի 22-րդ հատուկ նրստաշրջանի որոշումները: Մենք համառորեն կոչ ենք անում միջազգային հանրությանը հոգ տանել, որ փոքր կղզիների զարգացող պետությունների հատուկ կարիքները հաշվի առնվեն խոցելիության ինդեքսի հաշվարկման ժամանակ:

18. Մենք ընդունում ենք դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հատուկ կարիքներն ու պրոբլեմները եւ թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմանի դռնօրներին կոչ ենք անում ավելացնել ֆինանսական եւ տեխնիկական օժանդակությունը

այս խմբի երկրներին՝ դիմակայելու զարգացման իրենց հատուկ կարիքները եւ օգնել նրանց՝ հաղթահարելու աշխարհագրական դիրքի հետ կապված ռիսկերը եւ փարելավելու տրանզիտ տրանսպորտի կառուցվածքը:

19. Մենք այնուհետ վճռել ենք.

- ◆ մինչեւ 2015 թ. կիսով չափ կրճատել աշխարհի այն մարդկանց տեսակարար կշիռը, որոնց օրվա եկամուտը 1 դոլարից սլակաս է, եւ որոնք տառապում են քաղցից, ինչպես նաեւ մինչեւ նույն ստարին կիսով չափ կրճատել այն մարդկանց տոկոսային հարաբերությունը, որոնց համար անմատչելի է խմելու անվտանգ ջուրը.
- ◆ համոզվել, որ մինչեւ նույն թվականը երեխաներն ամենուր (տղա թե աղջիկ հավասարապես) հնարավորություն կունենան ավարտել տարրական ուսուցման լրիվ դասընթացը, եւ աղջիկներն ու տղաները հավասար հնարավորություն կունենան կրթության բոլոր մակարդակներում,
- ◆ նույն ժամանակահատվածում 3/4-ով կրճատել մայրական մահացության ներկայիս տոկոսը, իսկ մինչեւ հինգ տարեկան երեխաներինը՝ 2/3-ով,
- ◆ մինչ այդ թվականը կասեցնել, ապա նվազեցնել ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի, մալարիայի եւ այլ հիմնական մահացու հիվանդությունների տարածումը, որոնցով տառապում է մարդկությունը,
- ◆ հատուկ օժանդակություն ցույց տալ ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ից որբացած երեխաներին,
- ◆ մինչեւ 2020 թ. նշանակալիորեն փարելավել առնվազն 100 մլն ետնախորշաբնակների կյանքը՝ համաձայն «Քաղաքներ՝ առանց ետնախորշերի» նախաձեռնության առաջարկների:

20. Մենք որոշել ենք նույնպես.

- ◆ առաջ քաշել գեներալային հավասարության եւ կանանց զորացման՝ որպես աղբատության, սովի, հի-

վանդությունների հաղթահարման եւ կայուն զարգացմանը նպաստող իրոք ազդեցիկ միջոցի, հարցը,

- ◆ զարգացնել ու իրականացնել այնպիսի մարտավարություն, որը երիտասարդությանն ամենուր համապատասխան ու օգտակար աշխատանք գտնելու հնարավորություն կտա,
- ◆ նպաստել դեղագործության արդյունաբերությանը, որպեսզի զարգացող երկրներում անհրաժեշտ դեղերն առավել մատչելի լինեն բոլոր նրանց, ովքեր դրա կարիքն ունեն,
- ◆ սերտ համագործակցություն ծավալել անհատական սեկտորի ու քաղաքացիական հասարակական կազմակերպությունների միջեւ զարգացումը խթանելու ու աղքատությունը վերացնելու նպատակով,
- ◆ միջոցներ ձեռնարկել, որպեսզի, համաձայն ECOSOC-ի 2000 թ. Նախարարների հռչակագրով հաստատված երաշխավորությունների, նոր, հատկապես տեղեկատվության ու հաղորդակցության բնագավառի սարքավորումները մատչելի լինեն բոլորին:

IV. ՊԱՀՊԱՆՆԵԼ ՄԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

21. Մենք ոչ մի ջանք չպետք է խնայենք, որպեսզի ամբողջ մարդկությանը եւ առավելապես մեր երեխաներին ու բոռներին զերծ պահենք մարդու գործունեության հետեւանքով անդառնալիորեն աղտոտված մոլորակում ապրելու սպառնալիքից, որի պաշարներն այլեւս բավարար չեն լինի իրենց կարիքները հոգալու համար:
22. Մենք վերստին հաստատում ենք մեր օժանդակությունը կայուն զարգացման սկզբունքներին, ներառյալ «Օրակարգ 21»-ում առաջադրվածները, որոնց շուրջ համաձայնության են եկել ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ու զարգացման համաժողովում:
23. Ըստ այդմ, մենք վճռել ենք շրջակա միջավայրին առնչվող

մեր բոլոր գործողություններում ընդունել պահպանման ու տնտեսավարման նոր էթիկա եւ, որպէս նախնական քայլեր, որոշում ենք.

- ◆ ամեն ճիգ գործադրել՝ գործողության մեջ դնելու Կիոտոյի որոշումը (ցանկալի է մինչեւ 2002 թ.՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի եւ զարգացման համաժողովի տասնամյակի տարեդարձը) եւ նվազեցնել նախատեսած չափով ջերմոցային գազերի արձակումը,
- ◆ ակտիվացնել մեր համընդհանուր ջանքերը բոլոր տեսակի անտառների տնօրինման, պահպանման եւ կայուն զարգացման համար,
- ◆ հասնել նրան, որ ամբողջությամբ կիրառվեն Կենսաբազմազանության մասին եւ Անապատացման դեմ սլաքարի կոնվենցիաներն այն երկրներում, որտեղ երաշտի կամ անապատացման լուրջ սպառնալիք կա (հատկապէս Աֆրիկայում),
- ◆ դադարեցնել ջրային պաշարների ոչ ռացիոնալ սպառումը՝ մշակելով ջրային պաշարների օգտագործումը բարելավող տարածաշրջանային, ազգային եւ տեղական մակարդակների մարտավարություն, որը նպաստի ջրի թե՛ անաչառ մատչելիությանը եւ թե՛ բավարար առաջարկին,
- ◆ ակտիվացնել համագործակցությունը՝ նվազեցնելու բնական եւ արհեստական աղետների քանակն ու ազդեցությունը,
- ◆ երաշխավորել մարդկային գենոմի տեղեկատվության մատչելիությունը:

V. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՇԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

24. Մենք ոչ մի ջանք չենք խնայի՝ խրախուսելու ժողովրդավարությունը եւ ամրապնդելու օրենքի գերակայությունը, ինչպէս նաեւ հարգելու միջազգային հանրության կողմից

ճանաչված մարդու իրավունքները եւ հիմնական ազատու-
թյունները, ներառյալ առաջընթացի իրավունքը:

25. Ուստի, մենք վճռակամորեն որոշում ենք.

- ◆ լիովին հարգել եւ պաշտպանել Մարդու իրավունքնե-
րի համընդհանուր հռչակագիրը,
- ◆ պայքարել, որ մեր երկրներում խրախուսվեն եւ պահ-
պանվեն անխտիր բոլոր մարդկանց քաղաքացիա-
կան, քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ
մշակութային իրավունքները,
- ◆ ամրապնդել մեր երկրների կարողությունները՝ ի կա-
տար ամելու ժողովրդավարության հիմնական չափա-
նիշները եւ սկզբունքները, ինչպէս նաեւ պահպանել
մարդու իրավունքները եւ փոքրամասնությունների ի-
րավունքները,
- ◆ պայքարել կանանց հանդէպ բռնության բոլոր ձեւերի
դէմ՝ ի կատար ամելով Կանանց նկատմամբ խտրա-
կանության բոլոր ձեւերի վերացման մասին միջազ-
գային կոնվենցիան,
- ◆ ձեռնարկել բոլոր միջոցները՝ ասպահովելու փախս-
տականների, միգրանտ աշխատուժի եւ նրանց ըն-
տանիքների մարդու իրավունքների պահպանումը,
կասեցնել բազմաթիվ հասարակություններում արձա-
նագրված ռասիզմի եւ օտարատյացության դեպքերի
հաճախացումը, խրախուսել բոլոր հասարակարգե-
րում առավել վսեմ ներդաշնակությունը եւ հանդուրժո-
ղականությունը,
- ◆ աշխատել միասնական քաղաքական գործընթացն
ավելի ընդգրկուն դարձնելու ուղղությամբ՝ հնարավո-
րություն տալով երկրների բոլոր քաղաքացիներին
մասնակից դառնալու իրենց սլետության քաղաքա-
կան կյանքին,
- ◆ ասպահովել մամուլի ազատությունը, աջակցել նրան՝
իրականացնելու իր առաքելությունը, ինչպէս նաեւ ե-
րաշխավորել հանրության իրազեկության իրավունքը:

VI. ԽՈՑԵԼԻ ԽԱՎԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

26. Մենք ոչ մի ջանք չենք խնայի՝ օժանդակելու բնական աղետներից, ցեղասպանությունից, զինված առճակատումներից եւ այլ արհավիրքներից տուժած երեխաներին եւ քաղաքացիական մյուս բնակչությանը՝ շուտափույթ վերադառնալու կանոնավոր կյանքին:

Ուստի, մենք վճռականորեն որոշում ենք.

- ◆ ընդարձակել եւ գորացնել քաղաքացիական բնակչության սլաշտպանությունն արտակարգ իրավիճակներում՝ համապատասխանեցնելով այն միջազգային համամարդկային չափանիշներին,
- ◆ գորացնել միջազգային համագործակցությունը՝ մասնակից դառնալով եւ համաձայնեցնելով մարդասիրական գործողություններն այն երկրների հետ, որոնք ապաստան են տվել փախստականներին, օգնել նրանց եւ այլ բռնի ձեւերով տեղահանված բնակչությանը հոժարակամ վերադառնալու իրենց բնակավայրերը՝ ապահովելով անվտանգ ու արժանապատիվ կյանք, ինչպես նաեւ նրանց անխափան մերձեցումը տվյալ հասարակարգերին,
- ◆ վավերացնել եւ իրականացնել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան եւ կամընտիր արձանագրությունները, երեխաներին զինված ընդհարումների մեջ ներքաշման, երեխաների առք ու վաճառքի, մանկական սլոռնկության եւ մանկական սլոռնոգրաֆիայի մասին փաստաթղթերը:

VII. ՀՈԳԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՋՆԵՐԻՆ

27. Մենք կաջակցենք Աֆրիկայում ժողովրդավարության սկզբունքների արմատավորմանը եւ կսատարենք աֆրիկացիների սլաքարին՝ հանուն աղքատության նվազեցման, կայուն զարգացման ու խաղաղության:

28. Ուստի, մենք վճռականորեն որոշում ենք.

- ◆ միանգամայն համակողմանի աջակցություն ցուցաբերել Սֆրիկայի նորաստեղծ ժողովրդավարություններին թե՛ քաղաքական եւ թե՛ կառուցվածքային ասպարեզներում,
- ◆ խրախուսել տարածաշրջանային եւ տարածքային մեխանիզմների կայունացումը՝ կանխելով առճակատումները, օժանդակելով քաղաքական կայունացմանը, ինչպես նաեւ ապահովել միջոցների անխափան հոսքը տարածաշրջան՝ խաղաղապահ գործողություններ անցկացնելու համար,
- ◆ հատուկ միջոցառումներ ձեռնարկել աղքատության նվազեցման, Աֆրիկայի կայուն զարգացման, պարտքերի կասեցման նպատակով, ապահովել զարգացմանը նպատակաուղղված պաշտոնական օգնությունը, արտասահմանյան ներդրումները, ինչպես նաեւ տեխնոլոգիաների ազատ հոսքը տարածաշրջան,
- ◆ օգնել աֆրիկյան երկրներին՝ սանձահարելու ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի պանդեմիան եւ այլ տարափոխիկ հիվանդությունները:

VIII. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԶՈՐԱՅՈՒՄ

29. Մենք ոչ մի ջանք չենք խնայի՝ դարձնելու ՄԱԿ-ն ավելի ազդեցիկ գործիք, հետամուտ լինելով այնպիսի առաջնահերթ խնդիրների կատարմանը, ինչպիսիք են՝ պայքարն աշխարհի բոլոր ժողովուրդների զարգացման համար, պայքարն աղքատության, անիրազեկության եւ հիվանդությունների դեմ, պայքարը բռնության, ահաբեկչության եւ ոճրագործությունների դեմ, պայքարը մեր ընդհանուր տան քայքայման եւ կործանման վտանգի դեմ:

30. Ուստի, մենք վճռականորեն որոշում ենք.

- ◆ կրկին անգամ հաստատել Գլխավոր ասամբլեայի՝ որպես ՄԱԿ-ի հիմնական խորհրդակցական, քաղաքականություն ձեւավորող եւ ներկայացուցչական

- մարմնի, կենտրոնական դիրքը՝ հնարավորություն տալով նրան ավելի ազդեցիկ դարձնելու իր դերը,
- ◆ առավել եռանդով աշխատել Անվտանգության խորհրդի համապարփակ, բազմակողմանի բարեփոխումների ուղղությամբ,
 - ◆ զորացնել Տնտեսական եւ սոցիալական խորհուրդը՝ հիմնվելով նրա վերջին նվաճումների վրա, օգնելով կատարելու ՄԱԿ-ի կանոնադրությամբ վերապահված դերը,
 - ◆ զորացնել Արդարադատության միջազգային դատարանը՝ ապահովելով արդարության եւ օրենքի գերակայությունը միջազգային հարաբերություններում,
 - ◆ խրախուսել կանոնավոր խորհրդակցություններն ու համակարգումը ՄԱԿ-ի գլխավոր մարմինների միջեւ, որպեսզի նրանք հետամուտ լինեն իրենց առօրյա գործունեությանը,
 - ◆ վստահ լինել, որ կազմակերպությունը ժամանակին եւ կանխատեսելի հիմունքներով կապահովի ւնիթաժեշտ միջոցները՝ նախատեսված գործունեությունը կատարելու համար,
 - ◆ հորդորել Զարտոտյարությանը ընտրելու այդ միջոցների իրացման լավագույն տարրերակը՝ ներդաշնակ եւ հստակեցված այն օրենքների ու կանոնակարգերի հետ, որոնք Գլխավոր ասամբլեայի կողմից ճանաչվել են որպես անդամ երկրների շահերը հետապնդող, ավելի որակյալ կառավարման եւ առկա տեխնոլոգիաների շնորհիվ կենտրոնանալով այն առաջադրանքների վրա, որոնք արտացոլում են անդամ երկրների հետ համաձայնեցրած առաջնահերթ խնդիրները,
 - ◆ հավատարիմ լինել Միավորված ազգերի կազմակերպության եւ մասնակից կազմի անվտանգության մասին կոնվենցիային,
 - ◆ ապահովել ավելի մարտական քաղաքականություն եւ ավելի լավ համագործակցություն ՄԱԿ-ի, իր գործակալությունների, Բրետտոն Վուդի հաստատությունների

րի եւ Համաշխարհային առետրի կազմակերպութեան, ինչպէս նաեւ այլ բազմակողմանի մարմինների միջեւ՝ ուղղված խաղաղության եւ զարգացման խնդիրների ավելի լիարժեք համակարգմանը,

◆ հետեւողականորէն ամրապնդել համագործակցութիւնը ՄԱԿ-ի եւ ազգային ժողովների միջեւ՝ օգտագործելով Սիջապոլամենտական միութեան հատուկ կառույցը տարբեր նպատակներ իրագործելու համար, ներառելով խաղաղութիւնը, տնտեսական եւ սոցիալական զարգացումը, միջազգային օրենսդրութիւնը, մարդու իրավունքները, ժողովրդավարութիւնը եւ գենդերային հարցադրումները,

◆ ավելի մեծ ասպարեզ նախատեսել մասնավոր սեկտորի, հասարակական կազմակերպութիւնների, քաղաքացիական հասարակութեան համար՝ ընդհանուր առմամբ հնարավորութիւն տալով իրենց ներդրումը կատարելու կազմակերպութեան նպատակների եւ ծրագրերի իրագործման խնդրում:

31. Մենք առաջարկում ենք Գլխավոր ասամբլեայում պարբերաբար արձանագրել այս հռչակագրի շրջանակներում կատարված առաջընթացը եւ դիմել Գլխավոր քարտուղարին պարբերական զեկույցներ թողարկելու խնդրանքով, որոնք ի գիտութիւն կառնվեն Գլխավոր ասամբլեայի կողմից հետագա նախաձեռնութիւնների հիմք ծառայելու համար:

32. Օգտվելով այս պատմական իրադարձութիւնից՝ մենք միաձայն հավաստում ենք, որ Սլավոնիայի ազգերի կազմակերպութիւնը աշխարհի ողջ մարդկանց համընդհանուր ընտանիքի անձեռնմխելի տունն է, որի միջոցով մենք կփորձենք իրագործել խաղաղութեան, համագործակցութեան եւ զարգացման մեր ընդհանուր երազանքը: Մենք խոստանում ենք անսահմանափակ աջակցութիւն այս ընդհանուր նպատակները կատարելու համար եւ վճռակա՛նութիւն՝ հասնելու այդ նպատակներին:



United Nations Office in Armenia

UNITED NATIONS
UN AN - 3000 - December 2003
UNO/DPI Yerevan/065